## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# Հ Ր Ա Մ Ա Ն

« 28 » փետրվարի 2017թ. Ն 59-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի N 122-Ն որոշումը.

## Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2017 թվականի գերակա խնդիրները՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Նախարարի տեղակալներին, նախարարության աշխատակազմի ղեկավա-րին, նախարարության աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբա-ժանումների ղեկավարներին՝ ապահովել սույն հրամանով հաստատված N 1 և N 2 հավելվածներում նախատեսված միջոցառումների սահմանված ժամկետներում կատա-րումը:

3. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետին՝

1) ապահովել սույն հրամանով հաստատված N 1 հավելվածում ներառված միջոցառումների սահմանված ժամկետներում կատարումը,

2) ապահովել սույն հրամանով հաստատված N 2 հավելվածում ներառված գերակա խնդիրների սահմանված ժամկետներում կատարումը,

3) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 2-ը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2011 թվականի հունվարի 31-ի N 10-Ա հրամանով հաստատված հաշվետվության ձևին համապատասխան՝ ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2017 թվականի գործունեության միջոցառումների և գերակա խնդիրների իրականացման ընթացքի մասին:

4. Նախարարության աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 2-ը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2011 թվականի հունվարի 31-ի N 10-Ա հրամանով հաստատված հաշվետվության ձևին համապատասխան՝ նախարարության աշխատակազմի գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչություն ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2017 թվականի գործունեության միջոցառումների և գերակա խնդիրների իրականացման ընթացքի մասին:

5. Սույն հրամանի 2-րդ և 3-րդ կետի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին:

6. Սույն հրամանի 4-րդ կետի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել նախարարության աշխատակազմի ղեկավարին:

**ՆԱԽԱՐԱՐ՝**  **Ի. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

Հավելված 1
ՀՀ գյուղատնտեսության նախարարի
2017թ. փետրվարի 28-ի N 59-Ա հրամանի

# Ծ Ր Ա Գ Ի Ր
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| Միջոցառման անվանումը | Ակնկալվող արդյունքը | Պատասխանատու կատարողը | | | Ներկայացման ժամկետը | | Համակատարողը |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Նախարարի տեղակալ | Ստորաբաժանումը, կազմակերպությունը | Ստորաբաժանման, կազմակերպության ղեկավար | Նախարարի քննարկմանը | ՀՀ կառավարություն | |
| 1. (25) «Հայաստանի Հանրապետության անտառային ոլորտի բարեփոխումների հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | - Կուղենշվեն ՀՀ գյուղատնտեսության նախարարության իրավասությանը վերապահված անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառում կառավարման համակարգի բարեփոխման և կատարելագործման ճանապարհները,<br>- բարենպաստ պայմաններ կստեղծվեն անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման վիճակի բարելավման համար, հստակ կուրվագծվեն առաջիկա տարիների համար անտառային ոլորտի զարգացման ուղիները: | Ա2. Հարությունյան | Անտառային տնտեսության բաժին | Ա. Պետրոսյան | հունվարի 1-ին տասնօրյակ | հունվարի 3-րդ տասնօրյակ | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն<br><br>ՀՀ բնապահպանության նախարարություն |

| Միջոցառման անվանումը | Ակնկալվող արդյունքը | Պատասխանատու կատարողը | | | Ներկայացման ժամկետը | | Համակատարողը |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | **Նախարարի տեղակալ** | **Ստորաբաժանումը, կազմակերպությունը** | **Ստորաբաժանման, կազմակերպության ղեկավար** | **Նախարարի քննարկմանը** | **ՀՀ կառավարություն** | |
| 2. (26) «Բնակլիմայական աղետներից գյուղատնտեսությանը հասցվող վնասների կանխարգելման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | Հայեցակարգի ընդունմամբ ակնկալվում է՝ <br>- բնակլիմայական աղետներից վնասների կանխարգելման նախադրյալների ստեղծում, <br>- բնակլիմայական աղետներից վնասների կրճատման նախադրյալների ստեղծում, գյուղացիական տնտեսությունների երաշխավորված եկամուտների ապահովման միջոցառումների ձեռնարկման նախադրյալների ստեղծում: | Ռ. Մակարյան | Գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչություն | Հ. Ծպնեցյան | հունվարի 1-ին տասնօրյակ | հունվարի 3-րդ տասնօրյակ | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն |
| 3. (27) «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից իրականացվող ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | Իրավական ակտի նախագծի ընդունման դեպքում կսահմանվեն պեստիցիդների և ագրոքիմիկատների վաճառք իրականացնող կազմակերպությունների ստուգման համար պահանջվող ստուգաթերթերը: | Աշ. Հարությունյան | Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն | Գ. Օսիպյան | ապրիլի 2-րդ տասնօրյակ | մայիսի 3-րդ տասնօրյակ | ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն **(առաջին կատարող)** |

| Միջոցառման անվանումը | Ակնկալվող արդյունքը | Պատասխանատու կատարողը | | | Ներկայացման ժամկետը | | Համակատարողը |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Նախարարի տեղակալ | Ստորաբաժանումը, կազմակերպությունը | Ստորաբաժանման, կազմակերպության ղեկավար | Նախարարի քննարկմանը | ՀՀ կառավարություն | |
| 4. (28) «Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | Իրավական ակտի նախագծի ընդունմամբ կսահմանվի գինեգործական արտադրանքի ըստ իզոտոպային բաղադրության փորձաքննությունների արդյունքների մակնշման պահանջը: | Ռ. Մակարյան | Ագրովերամշակման զարգացման վարչություն | Գ. Ղազարյան | սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ | հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն **(առաջին կատարող)** |
| 5. (29) «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | Իրավական ակտի նախագծի ընդունմամբ կկատարվեն սննդամթերքի անվտանգության բարձրացման նպատակով սննդամթերքի անվտանգության ապահովման համակարգի և գործիքակազմի արդյունավետության բարձրացման վերաբերյալ հայեցակարգից բխող համապատասխան փոփոխություններ և լրացումներ: | Ա2. Հարությունյան | Սննդամթերքի անվտանգության բաժին | Ա. Շիրվանյան | հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն **(առաջին կատարող)** |
| 6. (30) «Հայաստանի Հանրապետությունում անասնաբուժության բնագավառում ռիսկերի գնահատման վրա հիմնված ստուգումների մեթո- | Իրավական ակտի նախագծի ընդունմամբ անասնաբուժության բնագավառում կվերանայվեն, կվերլուծվեն և կդասակարգվեն ստուգման ենթակա օբյեկտ- | Ա2. Հարությունյան | Անասնաբուժության և անասնաբուժության վարչություն | Լ. Տեր-Իսահակյան | հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական |

| Միջոցառման անվանումը | Ակնկալվող արդյունքը | Պատասխանատու կատարողը | | | Ներկայացման ժամկետը | | Համակատա-րողը |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Նախարարի տեղակալ | Ստորաբաժանումը, կազմակերպու-թյունը | Ստորաբաժանման, կազմակերպության ղեկավար | Նախարարի քննարկմանը | ՀՀ կառավա-րություն | |
| դաբանությունը հաստա-տելու մասին» ՀՀ կառա-վարության որոշման նա-խագիծը ՀՀ կառավարու-թյան աշխատակազմ ներկայացնելը | ներն՝ ըստ ռիսկայնու-թյան, որն իր հերթին կնպաստի ստուգումների կազմակերպման արդյու-նավետությանը: | | | | | | ծառայություն **(առաջին կատարող)** |
| 7. (31) «Հայաստանի Հանրապետության կա-ռավարության 2013 թվա-կանի փետրվարի 28-ի N 338-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարու-թյան որոշման նախա-գիծը ՀՀ կառավարու-թյան աշխատակազմ ներկայացնելը | Իրավական ակտի նա-խագծի ընդունման դեպ-քում կսահմանվեն հան-րակրթական ուսումնա-կան հաստատություննե-րի, նախադպրոցական ուսումնական հաստա-տությունների ստուգման համար պահանջվող ստուգաթերթերը: | Ա2. Հարությունյան | Սննդամթերքի անվտանգության բաժին | Ա. Շիրվանյան | հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ գյուղա-տնտեսության նախարարու-թյան սննդա-մթերքի ան-վտանգության պետական ծառայություն **(առաջին կատարող)** |
| 8. (32) «Գինեգործական արտադրանքին ներկա-յացվող պահանջների և թույլատրելի գինեգործա-կան մեթոդների ու մշա-կումների տեխնիկական կանոնակարգը հաստա-տելու մասին» ՀՀ կառա-վարության որոշման նա-խագիծը ՀՀ կառա-վարության աշխատա-կազմ ներկայացնելը | Հայաստանում արտա-դրվող գինեգործական արտադրանքի համար կսահմանվեն միասնա-կան՝ միջազգային պրակ-տիկայում ընդունված ան-վտանգության, տեխնոլո-գիական և որակական պահանջներ, որոնք կնպաստեն արտա-դրանքի անվտանգո-ւթյան ապահովմանը, արտահանման խթան-մանը և սպառողների շահերի պաշտպա-նությանը: | Ռ. Մակարյան | Ագրովերամշակման զարգացման վարչություն | Գ. Ղազարյան | հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | |

Հավելված 2
ՀՀ գյուղատնտեսության նախարարի
2017 թ. փետրվարի 28-ի N 59-Ա հրամանի

# Ծ Ր Ա Գ Ի Ր
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
# 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ

| Գերակա խնդիրը | Գերակա խնդրի լուծմանն ուղղվող քայլերը | Պատասխանատու կատարողը | | | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|---|---|
| | | Նախարարի տեղակալ, աշխատակազմի ղեկավար | Ստորաբաժանումը, կազմակերպությունը | Ստորաբաժանման, կազմակերպության ղեկավար | |
| 1. (24) Հանրապետության պարենային անվտանգության մակարդակի բարձրացում | – Չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերի շրջանառության մեջ ներգրավում (ցանքատարածությունների ավելացում 3.0-3.5 հազ. հեկտարով), | Ա2. Հարությունյան | Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն | Գ. Օսիպյան | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ |
| | – առաջնային սերմնաբուծության զարգացման ծրագրի իրականացում՝ շուրջ 60 տոննա աշնանացան ցորենի սուպերէլիտայի սերմացուի ներկրում, տեղական արտադրողներից 15 տոննա սերմացուի ձեռքբերում և դրա վերարտադրության ապահովում, | Ա2. Հարությունյան | Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն | Գ. Օսիպյան | հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ |
| | – գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի մատչելիության բարձրացում՝ շուրջ 19 հազ. շահառուի 6 տոկոսի սուբսիդավորմամբ 14 տոկոս տոկոսադրույքով վարկերի տրամադրում, | Ռ. Մակարյան | Գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչություն | Հ. Ծպնեցյան | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ |
| | – «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» երկրորդ ծրագրի շրջանակներում հիմնադրված «Արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներին աջակցություն՝ գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների տրամադրում (կտրամադրվի 100 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում՝ 25 միավոր տրակտոր), կոոպերատիվների անդամ տնտեսություններում կաթի արտադրության ծավալների խթանման և որակական հատկանիշների բարելավման համար կոոպերատիվներին հավաքման սառնարանային կետերի ու վերամշակման արտադրամասերի կառուցման աջակցություն, | Ռ. Մակարյան | Գյուղատնտեսական կոոպերացիային աջակցության բաժին<br>«Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ | Մ. Խաչատրյան<br>Գ. Գևորգյան | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ |

| Գերակա խնդիրը | Գերակա խնդրի լուծմանն ուղղվող քայլերը | Պատասխանատու կատարողը | | | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|---|---|
| | | **Նախարարի տեղակալ, աշխատակազմի ղեկավար** | **Ստորաբաժանումը, կազմակերպությունը** | **Ստորաբաժանման, կազմակերպության ղեկավար** | |
| | – ՀՀ գյուղատնտեսության նախարարության խորհրդատվական համակարգի միջոցով գյուղատնտեսական կոոպերացիայի խթանման միջոցառումների իրականացում: | Ռ. Մակարյան | Գիտական և գյուղատնտեսության աջակցության կենտրոնների համակարգման բաժին | Ի. Ծերեթելի | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ |
| 2. (25) Գյուղատնտեսությունում օգտագործվող կարևորագույն ռեսուրսների մատչելի գներով մատակարարում | –«Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին 2017 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի մշակում,<br>–«Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին 2017 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի մշակում,<br>–գյուղատնտեսությունում օգտագործվող հիմնական ռեսուրսների՝ շուրջ 32 հազ. տոննա ազոտական, 3,0 հազ. տոննա ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի, շուրջ 6.0 մլն լիտր դիզելային վառելանյութի մատակարարման ծրագրերի իրականացում: | Ա. Հարությունյան | Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն | Գ. Օսիպյան | մարտի 1-ին տասնօրյակ<br><br>մարտի 1-ին տասնօրյակ<br><br>նոյեմբերի 3-րդ տասնօրյակ |
| 3. (26) Սերմնաբուծությամբ մասնագիտացված տնտեսությունների միջոցով գյուղացիական տնտեսություններին վերարտադրված որակյալ սերմերի մրցակցային գներով մատակարարում | – Հանրապետությունում պահանջվող սերմացուի քանակի ճշգրտում,<br><br>– արտերկրից 1000-1500 տոննա գարնանացան գարու, մինչև 50 տոննա եգիպտացորենի, շուրջ 50 տոննա հնդկացորենի, 500-600 տոննա կորնգանի բարձր վերարտադրության սերմերի ձեռքբերում, | Ա. Հարությունյան | Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն | Գ. Օսիպյան | հունվարի 3-րդ տասնօրյակ<br><br>սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ |

| Գերակա խնդիրը | Գերակա խնդրի լուծմանն ուղղվող քայլերը | Պատասխանատու կատարողը | | | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|---|---|
| | | Նախարարի տեղակալ, աշխատակազմի ղեկավար | Ստորաբաժանումը, կազմակերպությունը | Ստորաբաժանման, կազմակերպության ղեկավար | |
| | հանրապետության սերմնաբուծությամբ և սերմարտադրությամբ զբաղվող մասնագիտացված ընկերություններին բարձր վերարտադրությամբ սերմերի հատկացում մարզերի (համայնքների) կողմից, ինչպես նաև պահուստային ֆոնդիծնավորման պահանջարկի հիման վրա,<br>– տրամադրված սերմերի հետվերադարձի ապահովում: | | | | սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ<br>սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ |
| 4. (27) Պտղի և խաղողի պատվաստված տնկանյութի արտադրությամբ զբաղվող գենոֆոնդի պահպանության և ինտենսիվ այգեգործության սելեկցիայի զարգացման գիտաարտադրական կենտրոնի ստեղծում | – Ստեղծված գիտաարտադրական կենտրոնի ծիրանենու և խաղողի գենոֆոնդի պահպանության կոլեկցիոն այգիներին պետականորեն պահպանվող հատուկ տարածքների կարգավիճակի տրամադրում,<br>– արտերկրից խաղողի ֆիլոքսերադիմացկուն պատվաստակալների կտրոնների ձեռքբերում՝ մինչև 2 հեկտար մայրուտային տնկարան հիմնելու համար,<br>– խաղողի ֆիլոքսերադիմացկուն մայրուտի հիմնում մինչև 2 հեկտար տարածության վրա,<br>– պտղատեսակների շուրջ 50 հեկտար ինտենսիվ այգիների հիմնման նպատակով ցածրաճ, բարձրարժեք տնկանյութի արտադրության նախապատրաստման աշխատանքների իրականացում: | Ա2. Հարությունյան | Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն | Գ. Օսիպյան | մարտի 3-րդ տասնօրյակ<br>մայիսի 3-րդ տասնօրյակ<br>հունիսի 3-րդ տասնօրյակ<br>հունիսի 3-րդ տասնօրյակ |
| 5. (28) Գյուղատնտեսական կենդանիների տոհմային և մթերատու հատկանիշների բարելավում | – Հանրապետությունում տոհմային կենդանիների պահանջարկի ուսումնասիրություն,<br>– եվրոպական երկրներից ՀՀ ներկրված տոհմային բարձրարժեք կենդանիների բուծմամբ զբաղվող տնտեսությունների՝ հանրապետության այլ տնտեսություններին տոհմային մատղաշ մատակարարելու հնարավորությունների գնահատում,<br>– լիազոր մարմնի կողմից տոհմային տնտեսության կարգավիճակ շնորհելու գործընթացի կանոնակարգում,<br>– տոհմային մատղաշի մատակարարման մեխանիզմների մշակում և գործընթացի կազմակերպում: | Ա2. Հարությունյան | Անասնաբուծության և անասնաբուժության վարչություն | Լ. Տեր-Իսահակյան | մարտի 3-րդ տասնօրյակ<br>մարտի 3-րդ տասնօրյակ<br>ապրիլի2-րդ տասնօրյակ<br>դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ |

| Գերակա խնդիրը | Գերակա խնդրի լուծմանն ուղղվող քայլերը | Պատասխանատու կատարողը | | | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|---|---|
| | | Նախարարի տեղակալ, աշխատակազմի ղեկավար | Ստորաբաժանումը, կազմակերպությունը | Ստորաբաժանման, կազմակերպության ղեկավար | |
| 6. (29) Գյուղատնտեսական արտադրանքի իրացման գործընթացի բարելավում | – Գյուղատնտեսական արտադրանքի իրացման և մթերումների գործընթացը կանոնակարգելու, մթերման ենթակա արտադրանքի որակական ցուցանիշների և նվազագույն գնի որոշման նպատակով ոլորտային խորհուրդների ստեղծում՝ ներգրավելով արտադրողներին, մթերողներին և ոլորտային միություններին, | Ռ. Մակարյան | Ագրովերամշակման զարգացման վարչություն | Գ. Ղազարյան | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ |
| | – մսի իրացման և գնման գործընթացում պարտադիր սպանդանոցային մորթի նախադրյալների ստեղծում, | Ա2. Հարությունյան | Անասնաբուժության և անասնաբուժության վարչություն | Լ. Տեր-Իսահակյան | դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| | – գյուղատնտեսական արտադրանքի տոնավաճառների կազմակերպում: | Ռ. Մակարյան | Ագրովերամշակման զարգացման վարչություն | Գ. Ղազարյան | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ |
| 7. (30) Գյուղացիական տնտեսությունների համար մասնագիտական դասընթացների կազմակերպում | – ՀՀ գյուղատնտեսության նախարարության խորհրդատվական համակարգի աշխատանքային ծրագրերում գյուղատնտեսության զարգացման, համայնքների գյուղատնտեսության ինչպես հիմնական, այնպես էլ հեռանկարային և զարգացող ուղղությունների, բացահայտված կարիքների վերաբերյալ թեմաների ընդգրկում ու մասնագիտական խորհրդատվության և տեղեկատվության տրամադրում,<br>– Գյուղատնտեսությունում տնտեսավարողներին գիտության նվաճումներին և նոր տեխնոլոգիաներին համապատասխան խորհրդատվության տրամադրում: Տնտեսավարողներին կմատուցվեն հետևյալ ծառայությունները՝ շուրջ 1072 սեմինար, 830 դաշտային ուսուցում և 140 փորձացուցադրական աշխատանք, 86 ռադիոհեռուստահաղորդում, 444 թեմայով տեղեկատվական թերթիկների տպագրում, 154 համար թերթի թողարկում: | Ռ. Մակարյան | Գիտական և գյուղատնտեսության աջակցության կենտրոնների համակարգման բաժին | Ի. Ծերեթելի | հունվարի 3-րդ տասնօրյակ<br>դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ |

| Գերակա խնդիրը | Գերակա խնդրի լուծմանն ուղղվող քայլերը | Պատասխանատու կատարողը | | | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|---|---|
| | | Նախարարի տեղակալ, աշխատակազմի ղեկավար | Ստորաբաժանումը, կազմակերպությունը | Ստորաբաժանման, կազմակերպության ղեկավար | |
| 8. (31) Ագրարային ոլորտում արտաքին ներդրումների ներգրավման գործընթացի ակտիվացում | – Երկկողմ և բազմակողմ համագործակցության արդյունքում ֆինանսական և նյութական ռեսուրսների ներգրավման ուղղությամբ բանակցությունների իրականացում,<br>– միջազգային կազմակերպությունների անդամակցության շրջանակներում ներդրումային ծրագրերի իրականացման ուղղությամբ աշխատանքների իրականացում,<br>– պետությունների հետ առևտրատնտեսական, գիտատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողովների շրջանակներում գյուղատնտեսությանն առնչվող հարցերի և ներդրումային ծրագրերի քննարկում,<br>– միջազգային ագրոպարենային ցուցահանդեսներին գյուղատնտեսությունում տնտեսավարողների մասնակցությանն աջակցություն: | Ար. Հարությունյան | Արտաքին կապերի վարչություն | Ա. Պետրոսյան | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ<br>դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ<br>դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ<br>դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ |
| 9. (32) Չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերի շրջանառության մեջ ներգրավման և ոռոգվող տարածքների ընդարձակման մեխանիզմների մշակում, անտառապատման և անտառավերականգնման ծավալների ընդլայնում | – Չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերի առկա (փաստացի) վիճակի վերաբերյալ տեղեկատվական շտեմարանի ստեղծում,<br>– մասնատված հողակտորների խոշորացմանն ուղղված միջոցառումների իրականացում՝ հողեր խոշորացման (կոնսոլիդացման) մեխանիզմների մշակում,<br>– ոռոգման արդյունավետ եղանակների ներդրման խրախուսում՝ գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում ցուցադրական տնտեսությունների հիմնում,<br>– անտառապատման և անտառավերականգնման աշխատանքների իրականացում (անտառապատում՝ շուրջ 70 հեկտար, անտառավերականգնում՝ շուրջ 500 հեկտար): | Աշ. Հարությունյան<br><br>Աշ. Հարությունյան | Հողերի օգտագործման և մելիորացիայի վարչություն<br><br>Անտառային տնտեսության բաժին | Ա. Բաղդասարյան<br><br>Ա. Պետրոսյան | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ<br>դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ<br>դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ<br>դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ |

| Գերակա խնդիրը | Գերակա խնդրի լուծմանն ուղղվող քայլերը | Պատասխանատու կատարողը | | | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|---|---|
| | | Նախարարի տեղակալ, աշխատակազմի ղեկավար | Ստորաբաժանումը, կազմակերպությունը | Ստորաբաժանման, կազմակերպության ղեկավար | |
| 10. (33) Ձկան և մեղրի մեջ մնացորդային նյութերի հսկողության ծրագրի իրականացում | – Ձկան մեջ մնացորդային նյութերի հսկողության 2017 թվականի մոնիթորինգային պլանի կազմում, 2016 թվականի մնացորդային նյութերի հսկողության արդյունքների ամփոփում և դրանց ԵՄ-ի սննդի գրասենյակ ներկայացում,<br>– մեղրի մեջ մնացորդային նյութերի հսկողության 2017 թվականի մոնիթորինգային պլանի կազմում, 2016 թվականի մնացորդային նյութերի հսկողության արդյունքների ամփոփում և դրանց ԵՄ-ի սննդի գրասենյակ ներկայացում,<br>– սահմանված կարգով ձկան՝ 150 ու մեղրի՝ 130 նմուշառում և նմուշների ներկայացում «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ՝ լաբորատոր փորձաքննությունների նպատակով,<br>– «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ում ձկան և մեղրի նմուշներում մնացորդային նյութերի բացահայտման և հաստատման լաբորատոր հետազոտությունների իրականացում՝ ԵՄ-ի ստանդարտներով, մեթոդներով: | Աշ. Հարությունյան | Սննդամթերքի անվտանգության բաժին<br><br>**Առաջին կատարող՝**<br>ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն | Ա. Շիրվանյան | մարտի 3-րդ տասնօրյակ<br><br>մարտի 3-րդ տասնօրյակ<br><br>հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ<br><br>դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ |
| 11. (34) Հանրապետությունում իրացվող պեստիցիդների որակի հսկողության իրականացում | – Իրացվող պեստիցիդների նմուշառում,<br><br>– պեստիցիդների նմուշների լաբորատոր հետազոտություն՝ ազդող նյութի պարունակությունը որոշելու նպատակով: | Աշ. Հարությունյան | Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն<br><br>**Առաջին կատարող՝**<br>ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն | Գ. Օսիպյան | սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ<br>սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ |

| Գերակա խնդիրը | Գերակա խնդրի լուծմանն ուղղվող քայլերը | Պատասխանատու կատարողը | | | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|---|---|
| | | Նախարարի տեղակալ, աշխատակազմի ղեկավար | Ստորաբաժանումը, կազմակերպությունը | Ստորաբաժանման, կազմակերպության ղեկավար | |
| 12. (35) Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման կարողությունների զարգացում | – Ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոնի արդիականացում, միջազգային պահանջներին համապատասխանեցում, անասնաբուժական ռիսկերի գնահատման մեթոդների ներդրում: | Ա2. Հարությունյան | Անասնաբուծության և անասնաբուժության վարչություն<br>**Առաջին կատարող՝**<br>ՀՀ գյուղատնտե-սության նախարարու-թյան սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն | Լ. Տեր-Իսահակյան | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ |
| 13. (36) Սահմանային վե-րահսկողության կազմա-կերպման և իրակա-նացման արդիականա-ցում | – միջազգային պահանջներին համապատասխան՝ սահմանային հսկիչ կետերի շենքային և աշխատանքային պայմաններ, վերանայված սահմանային վերահսկո-ղության ընթացակարգեր՝ սահմանային հսկիչ կետերի շենքային և աշխատանքային պայմանների բարելավման, միջազգային պահանջներին սահմանային վերահսկողության համապատասխանեցման միջոցով,<br>– «Մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքի պահանջները հաշվի առնելով՝ պետական սահմանի անցման կետերում ներգրավված մարմինների ստորաբա-ժանումներում կառուցվածքային փոփոխությունների իրականացում՝ հաշվի առնելով մարմինների գործա-ռույթների վերաբաշխումն ու պատվիրակումը: | Ա2. Հարությունյան | Սննդամթերքի անվտանգության բաժին<br>**Առաջին կատարող՝**<br>ՀՀ գյուղատնտե-սության նախարարու-թյան սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն | Ա. Շիրվանյան | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ<br>դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ |
| 14. (37) ՀՀ գյուղատնտե-սության նախարարու-թյան սննդամթերքի ան-վտանգության պետական ծառայության լաբորա-տոր կարողությունների զարգացում | – ստացված սարքավորումների տեղակայում,<br>– համապատասխան մեթոդների ներդրում, | Ա2. Հարությունյան | Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն<br>Անասնաբուծության և անասնաբուժության վարչություն | Գ. Օսիպյան<br>Լ. Տեր-Իսահակյան | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ<br>դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ |

| Գերակա խնդիրը | Գերակա խնդրի լուծմանն ուղղվող քայլերը | Պատասխանատու կատարողը | | | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|---|---|
| | | Նախարարի տեղակալ, աշխատակազմի ղեկավար | Ստորաբաժանումը, կազմակերպությունը | Ստորաբաժանման, կազմակերպության ղեկավար | |
| | – անձնակազմի վերապատրաստում,<br><br>– «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ միջազգային պահանջներին համապատասխան հավատարմագրման, լաբորատոր նոր սարքավորումների ձեռքբերման և միջազգային չափորոշիչներին համապատասխան լաբորատոր ծառայությունների մատուցում, հետազոտությունների տեսակների և քանակների ավելացում: | | | | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ<br>դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ |
| 15. (38) Գյուղատնտեսության զարգացման համար մասնավոր ներդրումների հավաքագրման մեխանիզմների ստեղծում | – Գյուղատնտեսության զարգացմանն ուղղված ներդրումային ֆոնդի մոդելի մշակում: | Ա. Կիրակոսյան<br><br>Ռ. Մակարյան | Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության<br>Գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչություն<br>Ագրովերամշակման զարգացման վարչություն<br>Իրավաբանական վարչություն | Կ. Ավետիսյան<br>Հ. Ծպնեցյան<br>Գ. Ղազարյան<br>Գ. Ավագյան | մայիսի 3-րդ տասնօրյակ |